

Հ Ա Շ Վ Ե Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

Արմավիրի մարզի Փարաքարի գյուղական համայնքի ղեկավարի աշխատակազմի
2012 թվականի առաջին կիսամյակի կատարած աշխատանքների

I. Քաղաքացիների և տնտեսվարող սուբյեկտների իրավունքների բնագավառ:

2012թ. առաջին կիսամյակում բնակիչներից ստացվել է 276 դիմում, որոնք ժամանակին պատասխանվել են,
ստացվել է 291 գրություն, որից 198-ը քննարկվել և պատասխան է ուղարկվել , չի պատասխանվել 3 գրության, որոնք գտնվում են քննարկման փուլում,
տարբեր հարցերով մասնակցել ենք 32 դատական նիստի,
վարչական պատասխանատվության է ենթարկվել 1 անձ,
կայացվել է համայնքի ղեկավարի 35 որոշում, ավագանու 4 նիստ,
արձակվել է 23 կարգադրություն,
կազմվել է թվով 2 կտակ,
տրվել է 1149 տեղեկանք,

II. Ֆինանսների բնագավառ

1. Փարաքար համայնքի 2012թ. 1-ին կիսամյակի ընթացքում

հավաքագրված եկամուտների վերաբերյալ հաշվետվություն և 2011թ. նկատմամբ համեմատական վերլուծություն

2012 թվականի վարչական բյուջեի 1-ի կիսամյակի ընթացքում հավաքագրվել է 74 մլն 362.2 հազ.դրամ գումար, որը կազմում է վարչական բյուջեի 45.9 %-ը, 2011թ.. նույն ժամանակաշրջանում հավաքագրվել 66 մլն 144.9 հազ.դրամ գումար՝ այսինքն 44 %-ը: Գնայած նորմայից պակաս է 4.1 %-ով, սակայն 2011թ. նկատմամբ ավել է հավաքագրվել 8 մլն 217.3 հազ.դրամ, կամ ավել 12.4 %-ով: որից վարչական բյուջեի գուտ եկամուտը 2012թ.-ին 2011թ.-ի համեմատ ավել է հավաքագրվել 4 մլն 678.8 հազ.դրամով, կամ 13.3%-ով:

	2011թ.			2012թ.		
	հավաքագրված	վիստացի կատարված	" "	նախատեսված	վիստ. կատարված	%
1.Հարկեր և տուրքեր	80741.0	32971.3	40.8	83410.4	36154.3	43.3
1.1 Հողի հարկ	9400,0	3506.0	37.3	10,400.0	5,550.7	53.4
1.2 Գույքահարկ	35000,0	16593.0	47.4	37,000.0	16,349.7	44.2
1.3 Գույքահարկ փոխադրամիջ.	17500.0	4130.0	23.6	18,000.0	5,149.5	28.6
1.4. Տեղական տուրք	18841.0	8742.3	46.4	18,010.4	9,104.4	50.6
Նոր կառ. շինութ.	630,0	238.7	37.9	460.0	67.0	14.6
Շին.քանդման	25,0	9.7	38.8	20.0	7.3	36.5
Ժամը 24:00-ից հետո	9890,0	4191.6	42.8	9,400.0	4,481.6	47.7
ա/խաղատում	4000,0	1353.1	33.8	4,000.0	2,395.6	59.9
բ/Շահում.խաղեր	5500,0	2655.3	48.3	5,000.0	1,914.4	38.3
գ/Հանրային սննդի օբ.	300,0	183.2	61.1	400.0	171.6	42.9
Օդի և ծխախոտի վաճ.	672.0	382.0	56.8	1,080.0	481.0	44.5
Բացօթյա վաճառք.	1458.0	709.5	48.7	1,582.0	561.9	35.5
ա/Այլ ապրանք.վաճ.	1008.0	430.1	42.7	982.0	332.4	33.8

բ/Վառելիքաքսայուղ	450.0	279.4	62.1	600.0	229.5	38.3
Գովազդի թույլտվ.	5800.0	2856.9	49.3	5,400.0	3,472.8	64.3
Արխիվից տրվ. փաստ.	456.0	353.9	77.6	68.4	32.8	48.0
3. պաշտոնակ. դրամաշն.	62159.0	31079.5	50.0	70,730.6	34,618.0	48.9
3.1 Պետական բյուջեից դոտացիա	62159.0	31079.5	50.0	64,504.0	32,252.0	50.0
3.2 Ազգային նվազարանների գծով սուբվենցիա	0	0	0	6,226.6	2,366.0	38.0
4. Այլ եկամուտներ	7300.0	2094.1	28.7	7,759.0	3,589.8	46.3
Ինքնակամ շին. օրինական.	3000.0	0.0	0	2180.0	1118.1	51.3
Տուգանք ինքնակ. շին.		149.8	0,0		0.9	0,0
աղբահանություն	2300.0	970.9	42.2	2989.04	1368.7	45.8
Վարձ. հողի. վճար	550.0	570.3	103.7	650.0	658.2	101.3
Տեղական վճար	850.0	403.1	47.4	1340.0	443.9	33.1
Ամսամարտ	600.0	0	0	600.0	0	
Ընդ. վարչ. բյուջե	150200.0	66144.7	44.0	161,900.0	74,362.2	45.9
վարչակ.բյուջ.գուտ եկամուտ	87441.0	35065.4	40.1	90569.4	39744.2	43.9
Հողի օտար. եկամ.	34932.4	34079.3	97.6	15,011.48	11,004.1	73.3
Ֆ/բ ազատ մնաց.	20867.6	20867.6	100.0	8,388.53	8,388.53	100.0
Ընդ. ֆոնդ. բյուջե	55800.0	54946.9	98.5	23,400.0	19,392.6	82.9
Ընդամենը	206000.0	121091.6	58.8	185,300.0	93,754.78	50.6
զուտ եկամուտ	122373.4	66144.7	56.5	105,530.5	50,748.3	48.1

2. Փարաքար համայնքի 2012թ. 1-ին կիսամյակի ընթացքում

ծախսերի կատարման հաշվետվությունը ըստ գործառնական դասակարգման և 2011 թ. նկատմամբ համեմատական վերլուծությունը

2012 թվականի վարչական բյուջեի 1-ի կիսամյակի ընթացքում կատարվել է ծախսեր 72 մլն 548.73 հազ. դրամ, 2011թ. նույն ժամանակաշրջանում կատարվել է ծախսեր 64 մլն 636.2 հազ. դրամ, ավել ծախս է կատարվել 7 մլն 912.5 հազ. դրամով:

N		Ծախսերի անվանումը	2011թ			2012թ		
Խումբ	Ենթախումբ		այլան	փաստ	կատար %	այլան	փաստ	կատար %
			Հազ.	դրամ		Հազ.	դրամ	
I		Վաչական բյուջե ընդամենը	150200.0	64.636.2	43.0	161,900.0	72,548.73	44.8
1		Տեղական ինքնակառավարում	54584.5	19583.9	35.9	49,592.84	19,634.0	39.6
2		Համայնքային այլ ծառայություն	800.0	140.0	17.5	585.1	295.1	50.4
4		Կրթություն և գիտություն	54000.0	26621.8	49.3	62,026.56	31,266.00	50.4
5		Սոցիալական ապահովություն	8000.0	2927.9	36.6	7,000.00	5,994.60	85.6
6		Մշակույթ, սպորտ և կրոն	2900.0	616.6	21.3	9,750.00	2956.26	30.3
7		Բնակկրնունակ տնտեսություն	28765.5	14746.0	51.3	29,815.50	12,402.74	41.6
	7.1	Սան մաքրում	12278.0	6311.2	51.4	13,086.50	6,085.60	46.5
	7.2	Այլ ծախսեր	16487.5	8434.8	51.2	16,729.00	6,317.14	37.8
8		Գյուղատնտեսություն	600.0	0	0	600.0	0	0.0
		Պահուստային ֆոնդ	550.0	0		2530.0	0	0.0
II		Ֆոնդային բյուջե	55800.0	49787.7	89.2	23,400.00	11,416.70	48.8

1	Շենքերի և շինությունների կառուցում	45644.0	41205.7	90.3	0.0	0.0	
2	Շենքերի և շինությունների կապիտալ վերանորոգում	2000.0	2000.0	100.0	8,300.0	5,591.6	67.4
3	Վարչական սարքավորումների ձեռք բերման ծախսեր	3000.0	2000.0	66.7	4,000.0	1,531.00	38.3
4	Ոչ նյութական հիմնական միջոցներ				100.0	100.0	100
5	Տրանսպորտային սարքավորումներ				6000.0	0.0	0.0
6	Նյութեր և պարագաների ձեռք բերման ծախսեր	2156.0	1582.0	73.4	1034.1	228.2	22.1
7	Հողի ձեռք բերման ծախսեր	3,000.0	3,000.0	100.0	3,965.90	3,965.90	100.0
I+II	Ընդամենը ծախսեր	206,000.0	114,423.3	55.5	185,300.0	83,965.4	45.3

Փարաքար համայնքի 2012թ. 1-ին կիսամյակի ընթացքում կատարված ծախսերի վերաբերյալ հաշվետվությունը

ա/ Գյուղապետարանի աշխատակազմի պահպանման համար 2012 թվականի 1-ի կիսամյակի ընթացքում կատարվել է ծախսեր 21 մլն 756.6 հազ.դրամ, որից աշխատավարձ՝ 13 մլն 875.0 հազ. դրամ, պարտադիր սոց.վճար՝ 2 մլն 509.3 հազ.դրամ, կատարվել է հներգետիկ, կոմունալ և կապի ծառայությունների դիմաց ծախսեր 791.3 հազ.դրամ, կատարվել է գործուղման ծախս 5.0 հազ.դրամ, կատարվել է համակարգչային և տեղեկատվական ծառայությունների դիմաց ծախսեր 584.4 հազ. դրամ, ներկայացուցչական ծախսեր է կատարվել 93.4 հազ.դրամի / նվերներ է տրվել 117 կանանց՝ մարտի 8-ի տոնի արթիվ/, ընդհանուր բնույթի այլ ծառայություններ 139.1 հազ.դրամի : Մասնագիտական ծառայությունների գծով կատարվել է ծախս 100.0 հազ.դրամ /Հայֆուսգազարդին, կադաստրին, էլԲիՍի-Դոմենին/: Շենքերի և շինությունների ընթացիկ վերանորոգման աշխատանքների համար կատարվել է ծախս 250.0հազ.դրամի/Լաիրի և Ի.Գասպարյան փողոցների բարեկարգման և մաքրման աշխատանքների համար վճարվել է աշխատավարձ՝ պարտադիր սոց. վճարի հետ միասին 68.4 հազ.դրամ և Փարաքարի մշակույթի տան վարագույրների տեղադրման համար՝ 181.6 հազ.դրամ/, քրթրիջների լիցքավորման և շտապ օգնության մեքենայի վերանորոգման համար կատարվել է ծախս 210.0 հազ.դրամ, ձեռք է բերվել գրասենյակային պիտույքներ՝ 150.0 հազ.դրամ, տրանսպորտային նյութեր՝ 652.0 հազ.դրամ, կենցաղային և մաքրիչ նյութեր՝ 50.0 հազ. դրամ, հատուկ նպատակային նյութեր 250.0 հազ.դրամ, փոխանցվել է պարտադիր վճարներ՝ 64.6 հազ. դրամ /դատական ծախսեր և պետական տուրքեր/, ձեռք է բերվել վարչական սարքավորումներ 1 մլն 531.0 հազ.դրամ / 376.0 հազ.դրամը՝ համակարգիչ իր սարքավորումներով. 1 մլն դրամը Փարաքարի մշակույթի տան դահլիճի վարագույրներ, 79.0 երաժշտական կենտրոն և 76.0 2 հատ միկրոաֆոն/կատարվել է ասֆալտապատման փոսային աշխատանքներ 85 քառ.մ 591.6 հազ.դրամի :

բ/ Ընդհանուր բնույթի այլ ծառայությունների գծով կատարվել է ծախսեր 4 մլն 261.0 հազ.դրամ / գրասենյակային պիտույքներ 110.0 հազ.դրամ, 50.0 հազարական դրամ Փարաքարի և Թաիրովի բուժ.ամբուլատորիաներին՝ հներգետիկ ծառայությունների պարտքի դիմաց, 85.1 հազ.դրամ Համայնքների միությանը, որպես անդամավճար: Բիոլճակի համար ձեռք բերված հողակտորի դիմաց վճարվել է 3մլն 965.9 հազ.դրամ:

գ/ Սոց օգնությունների գծով ծախսեր է կատարվել 5 մլն 994.6 հազ.դրամի: Թվով 179 քնտանիքի տրվել է գրանական օգնություն 5մլն 994.6 հազ.դրամ, որից 1մլն 413.5 հազ.դրամը վճարվել է դժբախտության մեջ հայտնված 28 քնտանիքների, և 3մլն 228.1

հազ.դրամը 118 անապահով ընտանիքների, 100.0 հազ.դրամ վճարվել է Համբարձում Զարևոսյանին 100 ամյակի կապակցությամբ: Վճարվել է ՀՄՊ 2 վեսերաններին 70 հազարական դրամ, թիկունքում ծառայած 6 մարտիկների 30 հազարական դրամ և Արցախյան պատերազմում զոհված 3 ազառամարտիկների ընտանիքներին 40 հազարական դրամ, Արցախյան պատերազմում վիրավորներ 8 մասնակիցի 20 հազարական դրամ՝ ընդամենը 600.0 հազ.դրամ, 1-ին երեխա ծնված 13 ընտանիքի վճարվել է 653.0 հազ.դրամ:

դ/ Այլ մշակութային կազմակերպությունների զծով կատարվել է ծախսեր 2 մլն 734.3 հազ.դրամ, որից աշխատավարձ 1 մլն 515.0 հազ.դրամ, պարտադիր սոց.վճար՝ 388.8 հազ.դրամ, Լներգետիկ ծառայություններ 358.9 հազ.դրամ, կազմակերպվել է միջոցառումներ երիտասարդական ծրագրերի միջոցով՝ 371.6 հազ.դրամ («Տիարնընդառաջ»-ի տոնի կապակցությամբ թվով 20 նորապսակ զույգերի տրվել է նվերներ, կազմակերպվել է կանանց միջազգային օրվա կապակցությամբ միջոցառում և մայիսի 28-ին Հայաստանի առաջին հանրապետություն հռչակման օրվա և Սարդարապատի հերոսամարտի հաղթանակի տարեդարձի կապակցությամբ Սարդարապատում կազմակերպվել է միջոցառում): Թաիրովի գրադարանի համար ձեռք է բերվել 132 կտոր գեղարվեստական գրականություն 100.0 հազ.դրամի:

ե/ Սպորտ միջոցառումների զծով կատարվել է ծախս 322.0 հազ.դրամ, դրամ, որից Լներգետիկ ծառայություններ 24.2 հազ.դրամ, գործուղման ծախսեր 297.8 հազ.դրամ /32.2 հազ.դրամ տրվել է ք. Երևան, 43.2 հազ.դրամ ք. Վանաձոր, 42.0 ք. Գյումրի, 33.6 ք. Սևան, 125.0 ք. Անապա՝ համայնքի բոնցքամարտի թիմի գործուղման համար, 21.8 հազ.դրամ դպրոցներում շախմատի թիմային առաջնության համար/:

զ/ «Բարեկարգում» տնօրինության միջոցով կատարված ծախսը կազմում է՝ 17 մլն 631.0 հազ. դրամ, որից աշխատավարձ՝ 7 մլն 81.6 հազ.դրամ, պարտադիր սոց վճար՝ 1 մլն 516.3 հազ.դրամ: Կատարվել է խմելու ջրի վարձ 232.0 հազ.դրամ, աղբավայրի վճար 625.0 հազ.դրամ, փոխանցվել է աղբատար մեքենայի վարձակալության համար 250.0 հազ.դրամ, և աղբատար մեքենայի վերանորոգման համար 149.0 հազ.դրամ, կատարվել է աղբահանության համար վաճելիքի /գազի/ ծախս 1 մլն 384.5.0 հազ.դրամ: Փոխանցվել է մասնագիտական ծառայություններ 29.0 հազ.դրամ / ավտոմեքենայի տեխ.գնման և էլեկտրոնային ստորագրության նմուշի համար/ գրասենյակային պիտույքներ՝ 30.0 հազ.դրամ, հստույն նպատակային այլ նյութեր 557.3 հազ.դրամ:

Կեղտաջրերի հեռացման, կոլեկտրի մաքրման կայանի ջրամեկուսիչ թաղանթի ձեռք բերման և տեղադրման համար 5 մլն դրամ, Թաիրով գյուղի Մեքենագործների շենքերի բակում կառուցվող խաղահրապարակի համար կատարվել է ծախս 228.2 հազ. դրամ :

է/ Փարաքարի մանկապարտեզին փոխանցվել է սուբսիդիա 10 մլն 900. հազ.դրամ, Թաիրովի մանկապարտեզին՝ 7 մլն դրամ, արվեստի դպրոցին՝ 11 մլն դրամ և ազգային նվազարանների անվճար ուսուցման համար հատկացվել է րնթացիկ դրամաշնորհներ 2 մլն 366.0 հազ.դրամ:

III. Պաշտպանության բնագավառ

Առաջին կիսամյակում կատարվել է համայնքի 16- 50 տարեկան զինապարտների գրանցամատյանների ճշտման աշխատանքները: Փետրվարին 73 զորակոչային տարիքի անձիք մասնակցել են նախագորակոչային բժշկական ստուգման և վերցվել՝ հաշվառման, 40 պատանիներ զորակոչվել են Հայկական բանակ:

Հունվարի 28-ին բանակի կազմավորման օրվան և մայիսի 9-ի հաղթանակի օրվան նվիրված միջոցառումների ժամանակ արցախյան պատերազմի ազատամարտիկները և ՀՄՊ –ի վետերանները մեծարվել են և ստացել դրամական պարգև:

IV. Քաղաքաշինություն և հողօգտագործման բնագավառ

- 2012թ առաջին կիսամյակում հաստատվել և ուժի մեջ է մտել Փարաքար համայնքի քաղաքաշինական ծրագրային գլխավոր փաստաթուղթը՝ գլխավոր հատակագիծը, որը սոցիալ- տնտեսական զարգացման նոր հեռանկարներ է բացում համայնքի համար :
- Կառուցապատողներին է տրվել 29 ճարտարապետահատակագծային առաջադրանք, որից 3-ը համաձայնեցվել է մարզպետարանի և Քաղաքաշինության նախարարության հետ:
- Համաձայնեցվել է 21 նախագիծ:
- Տրվել է 16 շինարարության թույլտվություն, որից
11-ը՝ նոր կառուցվող բնակելի տուն,
1-ը՝ միջին ճնշման գազատար,
1-ը՝ գազալցակայան բաշխիչ աշտարակ,
2-ը՝ առևտրի սրահի վերակառուցում,
1-ը՝ անհատական բնակելի տան վերակառուցում,
- Տրվել է ամբողջական շինարարությունների շահագործման փաստագրման 4 ակտ:
1-ը՝ առեվտրի սրահ,
1-ը՝ բնակելի տուն,
2-ը՝ «Ղ-Տելեկոմ» բջջային կայանի աշտարակ:
- Կայացվել է հողի կատեգորիայի փոփոխության 1 որոշում:
- Կայացվել է հողի գործառական նշանակության փոփոխության 3 որոշում:
- Կայացվել է ինքնակամ շինությունների օրինականացման 2 որոշում:
- Կասեցվել է 3 ինքնակամ շինարարություն:
- Կայացվել է գովազդային վահանակի տեղադրման նպատակով հողահատկացման 1 որոշում:
- Պարբերաբար տեղեկատվություն է ներկայացվել Արմավիրի մարզպետարան,
- Քաղաքաշինության նախարարություն, Քաղաքաշինական պետական տեսչություն, ԱԳ Կադաստրի պետական կոմիտե, Արտակարգ իրավիճակների նախարարություն, Վիճակագրական վարչություն և այլ պետական կառույցներ:
- Իրականացվել են Փարաքարի համայնքի կեղտաջրերի հեռացման կոլեկտորի և բիոլոգիական մաքրման լճակների շին. աշխատանքներ:
- Կատարվել են Փարաքարի մշակույթի տան հարակից այգու բարեկարգման աշխատանքներ :
- Կազմվել և հաստատվել է 22 իրավիճակային հատակագիծ:
- Կատարվել են հասցեների ճշտման և նոր հասցեների տրամադրման աշխատանքներ:
- Մարզպետարան է ներկայացվել համայնքի հողային ֆոնդի առկայության, բաշխման և ոռոգվող հողերի առկայության վերաբերյալ:

V. Բարեկարգման և կոմունալ տնտեսության բնագավառ

1 Կատարվել է Ի. Գասպարյան և Նաիրի փ. իաչմերուկների փոսային ասֆալտապատում.

2 Կատարվել է Ի. Գասպարյան և Նաիրի փ.ի փոստի հարեվանությանը ցայտաղբյուրների վերանորոգում

3. Կատարվել է մի քանի անապահով ընտանիքների ջրագծերի վերանորոգում.
4. Փոխվել է Թախրովի 1-ին և Մեքենագործների 1-ին շենքերի կոյուղագծերը.
5. Վերանորոգվել և կարգի է բերվել աղբատար մեքենաները/
6. Փոխվել է մաքրման կայանի բիոլճակի ջրամեկուսիչ թաղանթը
7. Երևանջուր ընկերության հետ վերանորոգվել և մասնակի փոխվել է համայնքի ջրի ներքին ցանցի հատվածներ.
8. Կառուցվել է Նաիրի փողոցի ջրաբաժան հանգույցի դիտահորը
9. Վերանորոգվել են Փարաքարի հիմնական դպրոցի ցանկապատը և բա-
հեկարգվել է մանկապարտեզի բակը(ներկվել են նստարանները և կառուցվել է
զրուցարան/
10. Մաքրվել է Թախրովի 1-ին. 4-րդ, 6-րդ, Նաիրի(փոստի հարեվանությամբ),
Բարեկամություն փողոցների կոյուղագծերը
11. Կազմակերպվել է հանդիպումներ և հաստատվել է մաքրման կայանի
աշխատանքների ժամանակացույց.
12. Մարզպետարանի, Երևանի քաղաքապետարանի, օդանավակայանի,
«Երևանջուր» ընկերության հետ կազմակերպվել է հանդիպում ռապսի տա
հաժքում լցվող կոյուղաջրի հարցի լուծման համար:
13. Բազմիցս վերանորոգվել է ջրամբար լցվող դուրս եկող պլաստմասե ջրագծերը:
14. Փարաքարի գերեզմանոցում աղբից մաքրվել է որոշակի տարածք և
խտեղծվել են նոր գերեզմանատեղեր:
15. Մաքրման կայանը լցվել է ջրով և նախապատրաստվել փորձարկման:
16. Կատարվել է համայնքի ղեկավարի կողմից տրված հանձնարարությունները:

VI. Առևտրի և սպասարկման բնագավառ,

Ա. Համաձայն առևտրի, հասարակական սննդի և սպասարկման ոլորտի գործունեության կանոնների, իրականացվում է այդ ոլորտի գործունեությունը.

տրամադրվել է 25 թույլտվություն համայնքի տարածքում ոգելից խմիչքների, ծխախոտի վաճառքի համար, 4 թույլտվություն, բացօթյա վաճառք կազմակերպելու համար, 5 թույլտվություն ժամը 24⁰⁰-ից հետո աշխատելու համար (խաղատուն -4 , խաղասրահ- 8)

արտաքին գովազդի տեղադրման համար տրվել է 32 թույլտվություն:

Բ. „Առևտրի, հանրային սննդի և կենցաղային ծառայությունների,, ոլորտում իրականացվում է հսկողության և դրանց արդյունքներն են.

- Հաշվետու ժամանակաշրջանում գործող օբյեկտների քանակը
Առևտրի -58
Հանրային -10
Կենցաղային ծառայություն- 26
- Մտուցված օբյեկտների քանակը
Առևտրի -21
Հանրային -4
Կենցաղային ծառայություն- 13
Արձանագրված խախտումներ չկան:

VII. Առողջապահության բնագավառ

Առողջապահական բնագավառ 2012 թվի 1 կիսամյակ:

<<Փարաքարի ԲԱ>>-ն սպասարկում է 5350 բնակիչ, որից 0-18 տարեկան՝ 1420 երեխա, 1 ճտարեկան և բարձր տարիքի՝ 3930 բնակիչ: Անբուլատորիայի ֆինանս ավորումը կատարվում է ՀՀ առողջապահության պետական գործակալության կողմից, որը 2012

թվականի համար կազմել է 19 մլն.551.4 դրամ: Ամբուլատորիայում հաշվառված են 160 հաշմանդամության խումբ ունեցող անձինք, ՀՄՊ, Արցախյան պատերազմի և Չեռնոբիլի 29 մասնակից: 2012 թվականին ամբուլատորիայում կատարվել է 3994 հաճախում, որից 0-18 տարեկան՝ 1067 երեխա, 18 տարեկան և բարձր 2927 բնակիչ: Կատարվել է 607 տնային այց, ստացիոնար է ուղեգրվել 69 հիվանդ: Արձանագրվել է 14 մահ: Տարվա ընթացքում ամբուլատորիայում կատարվել է 216 ԷՍԿ (էլեկտրասրտագրություն), 244 գլուկոմետրիա, 452 արյան և 383 մեզի ընդհանուր քննություն: Տարվա ընթացքում ըստ անհրաժեշտության բնակիչներին տրամադրվել են ուղեգրեր նեղ մասնագիտական խորհրդատվության և լաբորատոր գործիքային հետազոտությունների համար: Անվճար և արտոնյալ պայմաններով 1211,4 դրամի դեղորայք է տրամադրվել բնակչությանը: <<Փարաքարի ԲԱ>>-ում հաշվառվել է 14 հղի: 2012 թվականի I կիսամյակին կատարվել է 603 պլանային պատվաստում:

Թաիրովի Բ/Ա-ն սպասարկում է 759 0-18տ. երեխաներ և 2197 մեծահասակ:

I կիսամյակում ամբուլատորիա են հաճախել 2773 բնակիչ, կատարվել է 104 տնային կանչ:

Ընտանեկան բժշկի կողմից կատարվել է 197 ուղեգրումներ նեղ մասնագետներին:

Հաշվառվել և բժշկական սպասարկում են ստացել 10 հղի:

Ամբուլատորիայում կատարվել են լաբորատոր քննություններ՝ 525

էլեկտրասրտագրություն -100

Սոցիալապես անապահով, հատուկ խմբերին հատկացվել է 406.670

դրամի դեղորայք, 0-18տ. երեխաներին՝ 135.350 դրամի:

79 հիվանդ գտնվում է դիսպանսեր հսկողության տակ շաքարային դիաբետի կապակցությամբ, որոնք ստացել են անվճար դիաբետոն և ինսուլին:

119 երեխա ստացել են պրոֆիլակտիկ պատվաստումներ՝ ըստ

տարիքային խմբերի: 95 մեծահասակ ստացել են կարմրախտի, դիֆտերիայի, փայտացման դեմ պատվաստում:

Բուրբ դպրոցահասակ երեխաները ենթարկվել են բժշկական զննման:

Բժշկական գործունեությունը իրականացվում է հարմարավետ շենքում,

որը հագեցած է բժշկական սարքավորումներով և վերապատրաստում անցած կադրերով:

VIII . Ֆիզիկական կուլտուրայի և սպորտի բնագավառ

Հաշվետու ժամանակահատվածում համայնքում գործել են շախմատի, մինի-ֆուտբոլի, սեղանի թենիսի, առավոտյան վազքի և բոնցքամարտի խմբակները, որոնց մասնակցել են շուրջ 80 դպրոցականներ:

Մասնակցել ենք մարզային և հանրապետական մակարդակի մրցաշարերի: Շախմատիստները շախմատի ակադեմիայում մասնակցել են որակավորման մրցումների: Մարտ ամսին մասնակցել ենք մարզի շախմատի առաջնությանը, որտեղ Ինդրատ Կշտոյանը բաժանել է II-IV-րդ տեղերը: Բոնցքամարտիկները մասնակցել են մի շարք մրցաշարերի, այդ թվում նաև դպրոցականների և մեծահասակների առաջնություններին:

Փետրվար ամսին անցկացվել է համայնքի նարդու մեծահասակների անհատական առաջնությունը, որոնք որպես հուշանվեր գյուղապետարանի կողմից ստացել են նարդիներ:

Մարտ ամսին երեք փուլերով անցկացվել է դպրոցականների շախմատի զավաթի խաղարկությունը, որին մասնակցել են շուրջ 40 դպրոցականներ, հաղթող է ճանաչվել Փարաքարի միջնակարգ դպրոցի թիմը:

Մայիսի 16-ին հանդիպում ենք կազմակերպել շախմատի ակադեմիայի տնօրեն ՀՀ շախմատի ֆեդերացիայի փոխնախագահ Սմբատ Լպուտյանի հետ: 15 խաղատասխտակների վրա միաժամանակյա խալի սևանսից հետո (13 հաղթանակ և 2 ոչ ոքի) պարոն Լպուտյանը պատասխանեց համայնքի շախմատիստներին հուզող հարցերին, պայմանավորվածություն և ձեռք բերվել, որ 2012 թ. սեպտեմբերի 1-ից Փարաքար համայնքի մշակույթի տանը գործելու է շախմատի ակադեմիայի մասնաճյուղ:

IX. Աշխատանքի և սոց. ծառայության բնագավառ

ղեփախտության մեջ հայտնված 28 ընտանիքների ցուցաբերվել է նյութական օգնություն անապահով 118 ընտանիքների ցուցաբերվել է նյութական օգնություն

Համայնքում՝ ստացին երեխա ունեցող 13 ընտանիքների ցուցաբերվել է 50000-ական դրամ օգնություն

X. Նախադպրոցական հիմնարկներ

- մանկապարտեզներում կազմակերպվել են ցերեկույթ մայրության, գարնան գալու և գատիկի տոնին նվիրված

- հունիսի 1-ը՝ երեխաների պաշտպանության միջազգային օրը, հրավիրվել էին մուլտ. հերոսներ, նրանք զվարճացրցին երեխաներին և կազմակերպեցին հետաքրքիր խաղեր:

- հունիսին թվով 89 երեխաներ մասնացել են տարեվերջյան հանդեսին և ստացել գրենական պիտույքներ՝ դպրոց հաճախելու համար:

- կազմակերպվել են բաց պարապմունքներ՝ ծնողների ներկայությամբ,

- խմբերի մեջ կազմակերպվել են նկարչական մրցույթները,

- Լրեխաները գնացել են կենդանաբանական այգի

- կոսմետիկ վերանորոգվել է մանկապարտեզի խաղ. հրապարակը,

- համայնքի մանկապարտեզներում հաճախում են 205 երեխա, որից 13 երեխա անվճար,

Թախրովի մանկապարտեզը ձեռք է բերել 12 մ երկարությամբ սինթետիկ կարպետ:

XI. Արվեստի և մշակույթի բնագավառ

Փարաքարի մշակույթի տանը գործում են <Թիթեռնիկներ> պարային համույթը, և սպորտային պարերի խումբը: Ընդհանուր առմամբ պարային խմբերում հաճախում են շուրջ 120 երեխա:

Համայնքի Լրեխաների համար մշակույթի տանը հարակից տարածքում կազմակերպվել է շոու ծրագիր՝ հրավիրելով համապատասխան կազմակերպություններին: Կազմակերպվել է հանդիպում շախմատի ֆեդերացիայինախագահ Սմբատ Լպուտյանի հետ: Կայացել է խաղի միաժամանակյա սեանս 15 մասնակիցների հետ:

Հունիսի 15-ից մշակույթի տանը կից գործում է բակային ճամբար, որ հաճախում են շուրջ 35-40 երեխա: Մշակույթի տունն ունի ինտերնետային կայք, որ գեոնեղված են մշակութային բոլոր անցուղարձերը: Ամեներեկո մշակույթի տանը հարակից տարածքում հնչում և երաժշտություն, որն է լավելի է բարձրացնում այգի հաճախող այցելուների տրամադրությունը:

Վերընշված բոլոր միջոցառումները և աշխատանքները և լուսաբանվել են <Արմենիա> և <Լույս> հեռուստատեսությունների կողմից:

Թախրովի մշակույթի տանը գործում են պարի, նկարչության և դաշնամուրի խմբակներ: Նկարչության խմբակը մասնակցել է երեխաների պաշտպանության օրվա կապակցությամբ կենդանաբանական այգում անցկացվող միջոցառումներին:

Մշակույթի տան «Երիվան» պարի համույթը մասնակցել է մայրաքաղաքում անցկացվող բազմաթիվ միջոցառումների:
Համերգներով հանդես է եկել Միեր Մկրտչյան, Հակոբ Պարոնյան թատրոնների, Առնո Բարաջանյան ֆիլիհարմոնիկ համերգասրահի բեմերում:
Մասնակցել է գյուղում կազմակերպված բոլոր ծրագրերին:
Համայնքի ղեկավար Սամվել Վարդանյանի և Ազգային ժողովի պատգամավոր Առաքել Մովսիսյանի աջակցությամբ պարի համույթը մասնակցել է Բաթումիում «Կովկասյան պարեր» և «Միջազգային պարեր» փառատոններին:
«Կովկասյան պարեր» փառատոնում արժանացել է «Լավագույն կատարում» մրցանակին:
«Միջազգային պարեր» փառատոնում զբաղեցրել է առաջին տեղը:
Թաիրովի մշակույթի տունը Փարաքարի Սուրբ Հարություն եկեղեցու հետ համատեղ կազմակերպել է Սուրբ Զատիկին նվիրված միջոցառումների լայն ծրագիր: Որում կատարվել է «Ունը վա» արարողությունը: Հաջորդ օրը մշակույթի տան բակից կազմակերպվել է երթ դեպի Սուրբ Հարություն եկեղեցի, որտեղ կատարվել է «Հիսուսի թաղում» ծիսակատարությունը:
Հունիսի 15-ից Թաիրովի մշակույթի տանը գործում է բակային ճամբար, որտեղ հաճախում են 30-40 երեխա:

Թաիրովի մշակույթի տանը գործում է գրադարան: 2012 թվականին Երևանը հայտարարվել է գրքի համաշխարհային մայրաքաղաք: Այդ առիթով գրադարանում կազմակերպվել է հնատիպ հայ գրքի ցուցահանդես: Հունվարին նշվել է հայ մեծանուն բանաստեղծ Միլվա Կապուտիկյանի ծննդյան 93-րդ տարեդարձը: Փետրվարին մեծ շուքով նշվեց հայ մեծանուն գրող Դ.Դեմիրճյանի ծննդյան 135-ամյակը, մարտին՝ Եղիշե Չարենցի ծննդյան 115-ամյակը: Առաջին կիսամյակի ընթացքում գրադարանից օգտվել է շուրջ 400 ընթերցող:

«Փարաքարի Հովիվ Էդգարյանի անվան արվեստի դպրոց» ՀՈԱԿ-ի առաջին կիսամյակի ընթացքում կատարված աշխատանքները և միջոցառումները:

Արվեստի դպրոցի սաները մասնակցել են հետևյալ միջոցառումներին.

Հունվար ամսին՝ ցուցահանդես Թումանյանի տուն-թանգարանում, համերգ նվիրված Հայկական բանակի 20-ամյակին:

Փետրվար՝ համերգ Ս.Ասովաձաձին եկեղեցում նվիրված Տեառնընդառաջին Մարտ՝ համերգ նվիրված Համահայկական հիմնադրամի կազմավորման 20-ամյակին, համերգ Սբ. Հարություն եկեղեցու երիտասարդական միության տարեդարձի առթիվ, համերգ տուն-ինտերնատում նվիրված կանանց միջազգային օրվան, համերգ «Առաջին հնչյունաքայլեր»:

Ապրիլ՝ համերգ Սբ.Հարություն եկեղեցում նվիրված Սբ.Զատիկի տոնին, ցուցահանդես Փարաքարի մշակույթի տան գրասրահում՝ հանդիպում ՀՀԿ նախագահի հետ, հիշատակի համերգ նվիրված «Եղեռնի օրվան», համերգ-ցուցահանդես «Իզաբել» հանրապետական մրցույթ-փառատոնի բացմանը, «Ավանդական երգ ու պարի» փառատոն -մրցույթ Երևանի ճարտարագիտական համալսարանում:

Մայիս՝ Միջոցառում նվիրված հաղթանակի օրվան, հանրապետական թատերական մրցույթ-փառատոն, փողային նվագախմբերի փառատոն Արցախում, նվիրված Շուշիի ազատագրման 20-ամյակին, մասնակցություն մարզային համերգ-ցուցահանդեսի, մասնակցություն Սարդարապատի օրվա միջոցառմանը, այցելություն Սարդարապատի թանգարան, մասնակցություն Երևանի գեղագիտական կենտրոնի կազմակերպած մրցույթ-ցուցահանդեսին:

Հունիս ՝ դասարանական համերգներ, հանրապետական հաշվետու ցուցահանդես Հ.Թումանյանի տուն-թանգարանում, «Իզաբել» հանրապետակ մրցույթ ՝ II, III կարգի մրցանակներ և պատվոգիր, 2011-2012 ուս. տարվա հաշվետու համերգ, համերգ Փարաքարի մշակույթի տան զբոսայգում նվիրված «Երաժշտության միջազգային օրվան»:

XII. 2012 թ. առաջին կիսամյակի ընթացքում կազմակերպված միջոցառումները

Փարաքարի գյուղապետարանը 2012 թվականի ընթացքում կազմակերպել է միջոցառումներ, ուր ներգրավվել են համայնքի դպրոցների, մանկապարտեզների, արվեստի դպրոցի երեխաները, «Թիթեռնիկներ», «Փարվանա» և «Էրիվան» պարի համույթները:

Կազմակերպվել են հետևյալ միջոցառումները.

«Բանակի օր», «Տեառնընդառաջ», «կանանց միջազգային օր», «Ավագ հինգշաբթի» ՝ ոտնկվայի արարողություն և կարագի և յուղի օրհնեզի արարողություն, «Ճրագալույցի օր» ՝ քայլարշավ Թաիրովի մշակույթի տանից դեպի Սր.Հարություն եկեղեցի , մումավառություն ի հիշատակ 1915 թ. ցեղասպանության զոհերի, նախընտրական հանդիպում ՀՀԿ նախագահ Սերժ Սարգսյանի հետ, ՀՄՊ և Շուշիի ազատագրման օր, մայիսի 28 ՝ Առաջին հանրապետության և Սարդարապատի գոյամարտի նվիրված միջոցառում, «Երեխաների պաշտպանության օր»:

Անցկացվել են նաև չպլանավորած միջոցառումներ.

«Մեկ օր, մեկ թեմում» հանդիպում-զրույց քահանայի հետ, «Երաժշտության միջազգային օր»:

«Թիթեռնիկներ» և «Փարվանա» պարի համույթները մասնակցել են Վլադիկավկազ քաղաքում կազմակերպված «Танец дружбы» փառատոնին և զբաղեցրել երկրորդ տեղը:

«Էրիվան» պարի համույթը Բաթումի քաղաքում մասնակցել է փառատոնի և զբաղեցրել առաջին տեղը:

Մասնակցել ենք մանկապարտեզների, դպրոցների, արվեստի դպրոցի տարեվերջյան հաշվետու միջոցառումներին:

Հունիսի 15-ից համայնքի մշակույթի տներում գործում են բակային ճամբարներ, ուր հաճախում են մոտ 90 երեխա: